

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«26» ապրիլ 2021թ.

No 23 - Ն

ԱՆՁԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ԴՈՆՈՐ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ԳՐԱՎՈՐ
ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել անձի մահից հետո դոնոր հանդես գալու գրավոր անհամաձայնություն ներկայացնելու կարգը՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԿԱՐԳ

ԱՆՁԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ԴՈՆՈՐ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ԳՐԱՎՈՐ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են կենդանության օրոք անձի՝ իր մահից հետո որպես օրգանների և (կամ) հյուսվածքների դիակային դոնոր (այսուհետ՝ դիակային դոնոր) հանդես գալու գրավոր անհամաձայնության ներկայացման հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 30-ի 420-Ն որոշմամբ սահմանված կարգով առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող ընտանեկան բժշկի կամ տեղամասային թերապևտի (այսուհետ՝ բժիշկ) մոտ գրանցվելիս կամ հերթական այցի ժամանակ, քաղաքացին ծանուցվում է դիակային դոնոր հանդես գալու գրավոր անհամաձայնություն ներկայացնելու իր իրավունքի վերաբերյալ, ինչի մասին գրառում է կատարվում քաղաքացու ամբուլատոր բժշկական քարտում:

3. Սույն կարգի 2-րդ կետով սահմանված կարգով ծանուցվելուց և քաղաքացու կողմից դիակային դոնոր հանդես գալու գրավոր անհամաձայնություն ներկայացնելու որոշում կայացնելուց հետո, բժիշկը քաղաքացու ամբուլատոր բժշկական քարտում կատարում է գրառում՝ դիակային դոնոր հանդես գալու անհամաձայնության վերաբերյալ, որը ստորագրվում է քաղաքացու կողմից:

4. Բժիշկը էլեկտրոնային առողջապահության համակարգ է մուտքագրում անձի՝ որպես դիակային դոնոր հանդես գալու գրավոր անհամաձայնություն ներկայացնելու մասին տեղեկությունը:

5. Անձը դիակային դոնոր հանդես գալու գրավոր անհամաձայնություն ներկայացնելու մասին իր որոշումը կարող է փոխել բժշկի մոտ առանց սահմանափակումների: